

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՈՒԹԵՐ ՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 2

1 Մայիս 1897



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԼԷԼԷԿԵԱՆ

Պապը Ալի Ճառտեանի Թիւ 20

1897

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— — —

- 1 Քրիստոսի խօսքն էս աշխարհիս կատարածն .
- 2 Աստուծոյ անըմբռնելի բնութենէն էս այս աշխարհիս
բշտատութենէն ուրիշ կենաց յոյսն կը ծնի ի մեզ .
- 3 Ակնարկ մը Ս. Իգնատիոսի բոլորոց վրայ .
- 4 Տիեզերաց ծագումն էս Մովսէս .
- 5 Լեռներու վրայ մարդոյ շնչատութիւնն .
- 6 Երկրագրական .
- 7 Աստի անտի քանի մը առածներ .
- 8 ՎԱՐՔ Ս. ՄՈՆԻԲԱՅԻ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՐԻԿԵԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ուփերորդ Տարի

թիւ 2

1 Մայիս 1897

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՕՍՔՆ

ԵՒ

ԱՇԽԱՐՀԻՍ ԿԱՏԱՐԱԾՆ

Բանապաշտից ժողովք՝ (Rationalistes), կէտ նպատակի ունենալով զՔրիստոսեանս կարեւրէր հարուածել, փոխանակ ուղղակի ընդդիմաբանելու, եւ կամ եթէ հաճին՝ փոխանակ ձգելու թօթափելու այդ լուծն, որ ըստ իւր Հեղինակին՝ Յիսուսի՝ քաղցր է եւ փոքրոգի, փոխանակ ըսեմ՝ ուժանալու այն ըսկըղբունքէն՝ որ այլ եւս անտանելի կը թուի իրենց, վասն զի որչափ ալ քաղցր՝ սակայն լուծ մ'է, եւ որչափ թեթեւ՝ սակայն բեռ մը, կը ժախն առանց հեռանալու՝ անիծել, առանց բաժնուիլ կարենալու՝ նզովել. վասն զի գերբնական է. թէ եւ ոչ հաճոյական: Բնապաշտք՝ նիւթակրօնք՝ կամ ինչպէս լաւ գոչեց անցեալնորն Բեմէն՝ Սահաւատք՝ կ'ըսեն թէ չկայ Նախախնամ տնօրէթիւն մը, բայց ըստ առածին՝ ընդ բերան եւ ընդ ականջ քանի՞ ասպարեզք են, կամ լեզուին եւ սրտին մէջ որչափ է հեռաւորութիւնն. վասն զի կ'ըսեն, ու չեն լսեր. կ'ըսեն ու չեն հաւատար. կը խօսին բայց չեն զիտեր. այնպէս զի նպատակնին անդամ անձանօթ է իրենց. ինչպէս արբշիւ մը որ բերնէն թափիթըփածն ոչ կրնայ ժողովիլ եւ ոչ ալ պատասխանի արժանանալ: Այսպէս էր եւ վերջին աւուրց բանապաշտից ժողովի մը նախընտիր անդամոյն Քրիստոսի Տեառն մերոյ բանից եւ Դիտութեան մէջ եղած մեծ ու վիթխարի հա-

կատութիւնն ջանադիր ցոյց տալու կամ ցուցակելու փափաքն : Անշուշտ այսու Քրիստոսեան Եկեղեցւոյ կարեւրէր եւ աւելի վեր հարուած ու վէրք մը տալու ցանկութեամբ, Ահա խօսքն.

Քրիստոնէութեան նորածին աւուրց մէջ՝ առ հասարակ հաւատացեալք օր աւուր Երեսօր Քրիստոսի կրկին երեւմանն կ'ըսպասէին. այդ ծնունդն դեռ չմեռած՝ Որդին Աստուծոյ պիտի երևէր : Այս համոզումն նոյն իսկ իրենց Տէրն՝ կ'ըսէ բանապաշտն, ուսուցած էր իրենց մարդարէութեամբ մը՝ յորում յայտնի կ'երեւի Գիտութեան եւ Փորձին դէմ ունեցած հակասութիւնը : Այս սխալմամբ Առաքեալք եւ Աշակերտք վարդապետեցին նորահաւատներն :

Ո՛հ խեղճ, քանիննր, գիտե՛ս քանիննր խօսեցան քեզ նման. իրենք գացին, յիշատակնին անգամ կորաւ . սակայն Քրիստոս՝ Քրիստոսեան Եկեղեցի՝ նոյն են, անշարժ, անփոփոխ : Թէպէտ նմանութիւն ոչ ըստ ամենայնի՝ ժայռի մը դէմ քանի մ'ալիք աւելի բախեցան. ժայռն՝ կարծրագոյնն անգամ օր մը կը փշրի, իսկ Սա եւ Սորայն՝ անզգայ է այդ բախմանց :

Պատասխանեմք.

Երեք Աւետարանիչք աշխարհիս կատարածին վրայ Քրիստոսի Տեառն խօսքերն գրած են. (Մատթ. ԻԴ. 1-36 : Մարկ. ԺԴ. 1-33 : Ղուկ. ԻԱ. 7. 33) : Ղուկասու գրութիւնն մասանց աւելի պայծառութիւն ունի. Մատթէի գրածն աւելի կատարելութիւն : Քաղեմք մաս մաս, միւս Աւետարանիչներէ հատուածներ փաստ առնելով :

Ա. 1. Տաճարէ ելլելուն ատեն աշակերտք քովը կը մօտին տաճարին շինուածքը ցոյց տալու.

2. Տէրն կ'ըսէ. կը տեսնէք այդ ամենն, ամէն ասեմ ձեզ, քար քարի վրայ պիտի չմնայ :

3. Զիթենեաց լերան վրայ նստած է, աշակերտներն կը մօտին առանձինն ու կ'ըսեն. — Ըսէ մեզ, երբ պիտի ըլլայ այդ, եւ քու գալստեանդ եւ աշխարհիս վախճանին նշանն ի՞նչ է :

Բ. 4. Յիսուս պատասխան կուտայ. — Զգոյշ կեցէք, չըլլայ որ մէկը զձեզ խաբէ.

5. Վասն զի շատեր պիտի դան իմ անուամբս եւ ըսեն՝ Թէ ես եմ Քրիստոսն. չատերը պիտի մոլորին :

6. Պատերազմներ եւ կռիւններու համբաւներ պիտի լսէք, չխոտիլք, վասն զի այդ բաները ամենն ալ պէտք է որ կատարուին, այլ դեռ կատարած չէ :

7. Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, եւ իշխանութիւն իշխանութեան վրայ, եւ սովք եւ սրածութիւնք եւ սասանութիւնք պիտի ըլլան ի տեղիս տեղիս :

8. Սակայն այս ամենն երկանց սկիզբն է :

9. Յայնժամ պիտի տան զձեզ նեղութեանց եւ պիտի սպանան եւ ամենայն ազգք պիտի ատեն զձեզ իմ անուանս համար :

10. Յայնժամ շատերն պիտի դայթակղին, զիրար մատնեն պիտի եւ ատեն :

11. Շատ մը սուտ մարդարէներ պիտի ելլեն եւ շատերն պիտի մոլորեցունեն :

12. Եւ տնօրէնութեան շատնալուն՝ բազմաց սէրը պիտի ցամբի :

13. Բայց մինչեւ վերջը համբերողն պիտի փրկուի :

14. Արքայութեան Աւետարանս բոլոր տիեզերքն պիտի քարոզուի, ամենայն ազգաց ի վկայութիւն, եւ ապա կատարածն պիտի դայ :

Գ. 15. Ուստի երբ տեսնէք աւերածին պղծութիւնն՝ որ սրբութեան տեղւոյն մէջ, Դանիելի մարգարէի ձեռքով ըստածն, որ ընթեռնուն ի միտ առցէ : (Ղուկ. ԻԱ. 20, 21) : Երբ տեսնէք Երուսաղէմն զօրօք պատեալ, դիտցէք որ աւերածն մօտ է :

(Վասն զի Մատթէի վրայէն է քաղուածոյս, համառօտութեան համար մինչեւ 22 համարին վերջն կը լռեմք, վասն զի ուղղակի Երուսաղէմի կործանման համար է մարգարէութիւնն. որով եւ մեր ԳրաԺանման մասն կը կազմէ. իսկ յաջորդն կ'ըսկսի).

Դ. 23. Այն ատեն եթէ ոք ըսէ ձեզ թէ հոս կամ հոն է Քրիստոսն, մի՛ հաւատար :

24. Վասն զի սուտ Քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլան, մեծամեծ արուեստ եւ նշաններ պիտի տան, թէ հնար է՝ ընտրեալներն իսկ մոլորեցունելու համար :

25. Ահա ըսի ձեզի առաջուց :

26. Եթէ ըսեն՝ թէ ահա անապատին մէջ է՝ մի՛ ելլէք, եթէ շտեմարանին մէջ՝ մի՛ հաւատայք :

27. Վասն զի ինչպէս փայլակն՝ որ արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կ'երեւի, այնպէս պիտի ըլլայ որդւոյ մարդոյ գալուստն :

28. Վասն զի ուր որ է գէշն՝ հոն կը Ժողովին արծիւներն :

Ե. 29. Բայց այն նեղութեան օրերէն անմիջապէս վերջը՝ (Ղուկ. ԻԱ. 25. 26) արեւգական՝ լուսնին եւ աստեղաց վրայ նը-

շանններ պիտի ըլլան . երկրիս վրայ ազգաց տաղնապ, ծովու եւ խոռովութեան նման ահեղ բարբառէն, մարդոց ողիններուն սարսափի ելլելէն , տիեզերաց վրայ հասած վտանգէն, վասն զի տրեղակն պիտի խաւարի եւ լուսին իր լոյսն պիտի չտայ, մոլորակները պիտի իյնան երկնքէն, եւ երկնից զօրութիւնքն պիտի չարժին :

30. Ապա Որդւոյ մարդոյ նշանն պիտի երեւի յերկինքն , ամեն ազգերն պիտի կոծեն զանձինս եւ զՈրդի մարդոյ երկնից ամպերուն վրայ պիտի տեսնան եկած, զօրութեամբ եւ փառօք բազմօք :

31. Եւ մեծ փողով պիտի յղէ իր հրեշտակներն , եւ չորս հողմունքէն՝ երկնից ծագէն մինչ ի միւսն՝ իր ընտրեալներն պիտի ժողովեն :

2. (Ղուկ. ԻԱ. 28) Եւ երբ այս սկսի ըլլալ՝ վեր առէք , բարձրացուցէք զլուսնիդ, վասն զի ձեր փրկութիւնն մօտ է :

32. Թշնախիտն առակը սորվեցէք . երբ ոստերն կակղանան եւ տերեւն ցցուի՝ զիտէք որ ամառն մօտ է :

33. Նոյնպէս դուք ալ երբ այս ամենն տեսնէք՝ զիտցէք որ (Ղուկ. ԻԱ. 31) Աստուծոյ արքայութիւնն ի դուրս կայ :

34. Ամէն ասեմ ձեզ. այս աղբս չանցած՝ այս ամենն պիտի ըլլայ :

35. Երկինք եւ երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքս չանցնի պիտի :

36. Բայց այն օրուան ու այն ժամուն համար ոչ ոք չի տես, ոչ երկնից հրեշտակները, ոչ Որդի, բայց միայն Հայր :

42. Արդ արթուն կեցէք վասն զի չգիտէք թէ երբ պիտի դայ ձեր Տէրը :

Այսպէս պարզելէ յետոյ թող հաճի բանասպաշտ հակառակորդն ըսել մեզ. — Քրիստոսի ի՞նչ հարցում ըրին աշակերտք. — «Ասա մեզ, Է՞րբ լինիցի այդ», եւ աւելցուցին , «Զի՛նչ նշանքոյ զայստեանդ եւ աշխարհիս վախճանին» :

Հրէից համար Տաճարն եւ Երուսաղէմ տիեզերաց սիրտն էր ու ողին . Մեսիայի գալստեամբն միայն կրնար ապականիլ այդ՝ ի փառաւորն փոխուելու համար. յուղայական հոյակերտքն տիեզերաց վրայ կանգուն պիտի մնային մինչեւ որ Օծեալն համաէր եւ անասական նորոգութիւնն տար Տիեզերաց. այսպէս Գիրք եւ աւանդութիւնք միշտ չնչած էին եւ սնունդ տուած Երրայական զաւակին : Այս սկզբունքն դնելով, Տաճարին աւե-

րածն, Երուսաղեմի քանդումն, Առաքելոց համար ալ՝ որ նոյն ժողովրդեան զաւակներն էին, Տիեզերաց կործանումն ըսել էր, եւ աշխարհիս կատարածին հետ կից, Այսպէս եւ այս մոռք աշակերտք կը հարցունեն զՏէր : Կարծեմք թէ պատասխանին լուծումն զժուարին խնդիր մը չէ : Բառական իմաստովն իսկ երթալով, Քրիստոս Տէրն մեր՝ նախ Երուսաղեմի եւ Կատարածին միանգամայն առ հասարակ քանի մը նշաններ կուտայ, յետոյ առանձինն առանձինն անոնց վրայ կը խօսի եւ նորէն միացունելով զանոնք իրարու հետ՝ Առաքելոց առաջին հարցման պատասխանն կուտայ : Այսպէս Բ. բաժանումն առ հասարակ տրուած նշաններն են . — Գ. ն առանձինն Երուսաղեմի կործանման . — Ե. կատարածին . — Դ. յամանց Երուսաղեմի կը տրուի, յոմանց տիեզերաց . — Զ. պատասխանն է հետեւեալ հարցման = Ե՞րբ լինիցի այդ ամենայն :

(Շարայարեկի)

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆԸՄԲՈՆԵԼԻ ԲՆՈՒԹԵՆԷՆ

Է.

ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՍ ԹՇՈՒԱՌՈՒԹԵՆԷՆ

ՈՒՐԻՇ ԿԵՆԱՅ ՅՈՅՍՆ ԿԸ ԾՆԻ Ի ՄԵԶ

(Շարունակութիւն տես քիւ 1)

Արարչին ամեն զործերն իր զոյութիւնն կը հոչակեն . ընդարձակ զաշտն զոր աչօք չեմ զօրեր պարուրել եւ լայնածաւալ երկինքն որ անոր վրայ կը ձգի՝ իր անհուն մեծութեանն զաղափար մը կուտան ինձ. ճիւղերէն հասակիս բարձրութեամբ ձեռքիս զիւրամբը կախուած պտուղներն մրգաստանի մէջ՝ իր խնամատար հոյն կը յիշեցունեն. մերկի դուալն՝ իր զօրութիւնն. հաստատուն կարգաւ եղանակաց դարձն՝ իր իմաստութիւնն . իւրաքանչիւր կլիմայի համեմատ առանձին առանձին արարածոց տարած խնամքն, անտառներու վեհ կերպարանքն, մարգարեանին սրտազրաւ կանաչութիւնն, անկերու խումրն, ծաղկանց բոյրն եւ գեղեցկութիւնն, ծանուցեալ եւ ճանաչելի բնութեւոր ներդաշնակութիւններն, հոյակապ բարբառներ են հազարումէկ ձայներով անոր վրայ խօսող առ համայն մարդկութիւնն :

Բնութեան կարգն իսկ աւելորդ է . Աստուած այն միակ էակն է՝ զոր խառնակոյտն անգամ եւ մեր տկարութիւնն կը յայտնեն : Իր ստորոգելիքն ճանչնալու համար մեր անկատարութեանց զգացումն միայն բաւական է : Ո՛հ, որչափ վսեմ եւ վեհ այդ մարդկային սրտին բնական աղօթքն՝ զոր ցարդ մեր վայրենի կոչած ժողովրդեան բերանն կ'արտասանէ . — Ո՛ Եւրօտենական, ողորմէ ինծի, վասն զի անցաւոր եմ ես . ո՛ անհուն, զի կէտ մ'եմ ես . ո՛ հզօր, զի տկար եմ . ո՛ կենաց հոսանք, զի ահա կը մահանամ . ո՛ իմաստուն, զի վրիպած եմ . ո՛ առատաձեռն, զի աղքատ եմ . ո՛ ամենակալ, զի բանի մը կարող չեմ :

Մարդ ինքնիրեն բան մը տուած չէ . ամեն բան ընդունած է . եւ ուրար զաչս ո՛չ տեսանիցէ . եւ որ արար զունկն ո՛չ լսիցէ . Նա որ անոր իմացականութիւն տուաւ իրեն պիտի պակսի : Եթէ դեռ եւս Աստուծոյ գոյութեան փորհերուն վրայ կենամ՝ ընթերցողացս դէմ անիրաւած պիտի համարեմ զիս . իր բարութեանը վրայ մտածենք :

Մարդկային օրէնք տիեզերքն ուղղող իմաստութեան գրծէն քաղուած են : Մարդ պարզ բնութեամբ էակ մը չէ : Առաքինութիւնն որ երկրիս վրայ իր մասն պիտի ըլլայ՝ մէկ կողմէ կ'առաջարկէ իրեն իր օրինակ՝ աստուածային իմաստութիւնն, եւ միւս կողմէ իր երանութեան ամենէն ապահով ճամբան : Ուսումնասիրեցէք, հարցուփորձ ըրէք բնութիւնն եւ պիտի տեսնէք որ մարդկային երանութեան ասկէց աւելի պատշաճաւոր չկայ, եւ թէ առաքինութիւնն այս աշխարհէս սկսեալ իր հետ իր վարձատրութիւնն կը կրէ : Զգաստութիւն եւ ժուժկալութիւն մարդոյ առողջութիւնն կ'ապահովեն . հարստութեան եւ փառաց արհամարհութիւնն՝ իր հանդիստն . եւ յԱստուած վրաստահին՝ արիութիւնն :

Վերջապէս ինչ կը պարտէր Աստուած իւրաքանչիւր մարդոյ Աղբիւրներու ջուրն, պտուղներ, բուրդ՝ ազանելիքի համար, այնչափ հող որչափ իր ձեռքով կրնայ մշակել : Ահաւասիկ անոր մարմնոյն կարեւորն : Իսկ հողւոյն՝ բաւական է տղայութեան ժամանակ իր ծնողաց սէրն, յարբուստ՝ իր լծակցին, ծերութեան առանձին իր զաւակաց երախտագիտութիւնն . միշտ իր զրացեաց եւ մերձաւորներուն բարեկամութիւնն, որոնց թիւն չորս կամ հինգ է, ըստ իր շրջանին տարածութեան : Իսկ երկրադնտիս ծանօթութեան մասին՝ չատ չատ կէս օրուան ճամբայ, որպէս զի գիշերը բացօթեայ չմնայ անէն հեռու, կամ առ

ստաւելն մինչեւ տեսնուած հորիզոնն, Նախախնամութեան ըզ-
դայման մասին՝ բնութեան առ հասարակ մարդոյ տուածն, որ
եթէ դաշտին մէջ ժուռ դայ կամ աշխարհս չըջագայի՝ սրտին
մէջ պիտի ծնանի։ Այս բարեքներով ու լոյսերով պէտք է զո-
հանայ։ Եթէ աւելին խնդրէ՝ իր կարօտութենէն զուրս է եւ
բնութեան բաշխումն։ Աւելորդն ստանալու ջանքով հարկաւո-
րէն պիտի զրկուի։ Այդ պատիւներն՝ սպասաւորք՝ հարօտու-
թիւնք, եւլն, , զորս այնչափ մարդիկ կը խնդրեն՝ անիրաւ վա-
ւաքներ են։ Շատ աշխատանք ու յոգնութիւն զանոնք ձեռք
բերելու համար, անոնց վայելումն անհանգստութիւն, եւ կո-
րուստը ցաւ։ Այդ կարծեցեալ բարեաց համար առողջութիւն
բանականութիւն եւ խիղճ կը վատանան։ Այնպէս փնտս է տան
մը ինչպէս քաղաքի։ Հռովմ՝ ոչ աշխատութեամբ, ոչ աղքա-
տութեամբ եւ ոչ մարտիւ, այլ բոլոր աշխարհիս հաճոյքովն եւ
ցոփութեամբն սպառեցաւ։

Այո՛, բարի մարդն կը նեղուի կը չարչարուի երբեմն, այլ
եթէ Նախախնամութիւնն կարօտելոյն իսկոյն նեղութեան հաս-
նէր՝ անոր ձեռաց դործին կ'ըլլար։ Այն ատեն մարդ Աստուծոյ
կը հրամայէր։ Եւ ապարդիւն կը մնար այդու. սակայն հազուա-
դիւսութեան պատուհանին ի սպառ լռելն անօրինէն։ Ենթա-
դրենք շատ շատ թէ զո՛հ ըլլայ. ամեն չարեաց վախճանն է մահ։

Աստուծոյ կամաց կատարեալ համակամութիւնն ամեն ժա-
մանակ մեր սիրտը պէտք է խաղաղէ. այլ եթէ մարդկային զա-
ռանցանք մեր ողին վրդովեն՝ ահա զմեզ հանդարտեցունելու
խորհուրդն։ Երբ բան մը բնութեան կարգին մէջ զմեզ վրդովէ
եւ իր արարչէն զմեզ խրտչեցունէ՝ այդ վիրաւորող կարգին հա-
կառակ կարգ մը մոտաբերենք, այն ատեն մեր ենթադրութենէն
բաղմաթիւ հետեւանք պիտի ծնանին, որով մեր անտանելի կար-
ծած չարիքն պիտի թեթեւնայ եւ շատ աւելի ծանրագոյններու
պիտի տոկալ կարենայ։ Երբ մարդկային կատարելութեան երեւ-
ւակայութիւնն փորձէ մեր սիրտը՝ հակառակ դրութիւնը կըր-
նանք վարել, այսինքն ճշմարիտ ենթադրելով խորհիլ, եւ ահա
հակասական հետեւանքներն կը յայտնեն։

Այս երկու գրութեամբ Սոկրատէս իր դարուն իմաստակ-
ները պապանձեցուց։ Տկար փաստերուն պատուար մ'է. զօրաւ-
որ հարուած մը հակառակին։ Բնութեան կարգը ճշգրտելու
համար՝ բաւական է ընդունիլ զայն. մարդկային գրութիւնքն
ջրելու համար՝ բաւական է ընդունիլ զանոնք։ Օրինակի ազա-

գաւ, մարդիկ կը քրթմնջեն մահուան դէմ, այլ եթէ բնաւ մարդիկ չմտնէին՝ ինչ իրենց զաւակներն կ'ըլլային : Շատոնց առնոց համար աշխարհիս վրայ տեղ պիտի չգտնուէր . ուրեմն բարիք մ'է մահն : Մարդիկ կը տրանջան իրենց աշխատութեան դէմ . բայց եթէ չաշխատէին ինչպէս պիտի կեանքերնին անցունէին : Աշխարհիս երջանիկներն չուարած՝ ժամանակնին ինչ ընել չեն գիտեր . ուրեմն բարիք մ'է աշխատութիւնն : Կենդանուանք բնազդին կը նախանձին մարդիկ . այլ եթէ անոնց պէս ծընած ատեն ամեն գիտնալիքն գիտնային՝ ինչ պիտի ընէին աշխարհիս մէջ : Առանց չահու եւ առանց հետաքրքրութեան պիտի ապրէին . ուստի տգիտութիւնն բարիք մ'է : Բնութեան միւս չարիքն ալ այսպէս կարեւոր են : Մարմնոյ ցաւն եւ հոգւոյ թախճութիւնն որով կենաց ճամբան կը կտրենք՝ պատուարներ են զորս բնութիւնն դրած է՝ որպէս զի իր օրէնքէն չխոտորինք : Եթէ ցաւ չըլլար՝ մարմինք թեթեւ ընդհարմամբ կը խորտակէին, առանց թախճութեանց՝ որ այնպէս յաճախ մեր ուրախութեանց կ'ընկերակցին՝ հոգիք փոքրիկ հաճոյքով կը բխանային . հիւանդութիւններն՝ վեասակար հիւթերն արտաքսելու համար մարմնոյն ջանքն է . բնութիւնն զմարմինք կորուսանելու համար չյղեր հիւանդութիւններն, այլ փրկելու : Միշտ իր օրինաց զանցառութեան հետեւանք են անոնք, բնականին կամ բարոյականին : Յաճախ ինքնիրեն կը բռնեն . կերակրէն պահքն մարմնոյ առողջութիւն կուտայ, իսկ մարդիկներէն պահքն՝ հոգւոյ հանգստութիւն : Ընկերութեան մէջ ինչ կարծիք որ զմեզ կը խռովեն՝ գրեթէ միշտ միայնութեան մէջ կը ցնդին : Թեթեւ քունն իսկ բարոյական դրքէ մ'աւելի քաղցրութեամբ եւ ապահով մեր տխրութիւնն կը փարատէ : Եթէ չարունակ անհանգիստ ընող են զմեզ մեր ցաւերը՝ Աստուծոյ դիմելով զանոնք կ'ամօքենք : Կենաց ամեն ճամբայ յայտ կը յանդի : Բարգաւաճումն կը հրաւիրէ զմեզ յայն մօտենալ, այլ հակառակութիւնն կ'ըստիպէ : Աստուած այդ միջոցաւ կ'ըստիպէ զմեզ առ ինքն գիմել : Առանց այս ճային որ ամենուս կ'ուզղի՝ շուտ կը մոռնայինք զինքը . մանաւանդ քաղաքներու ամբոխման մէջ, յորս բիւրաւոր անցաւոր չահեր յաւիտենական չահուն հետ կը խառնուին, եւ բիւրուց բիւր երկրորդական խնդիրներ առաջինն կը մոռցունեն :

Դաւով ընկերութեան ցաւերուն՝ անոնք բնութեան չեն . այլ այս չարիք իսկ կը յայտնեն՝ թէ իրաց ուրիշ կարող մը կայ :

վասն զի միթէ բնականն է խորհիլն՝ թէ բարի եւ արդար էակն որ մարդոց երջանկութեան համար ամեն բան յրած է երկրիս վրայ՝ անպատասխար եւ զուրկ թողու։ Միթէ տարաբախտ եւ առաքինի մարդուն՝ որ ջանադիր ճգնած է հաճոյ ըլլալու իրեն՝ բան մը պիտի չընէ՞, մինչ այնչափ չարասիրտ մարդոց առատ առատ տուած է ամեն ինչ, որով կը զեղծանին։ Ձրի բարիքն ընելէ յետոյ՝ հարկաւոր արդարութիւնը պիտի զլանայ։

Եթէ մենք հիմակ միայն ապաւնի կեանքի ցանկութիւնքն եւ նախազգացմունքն ունինք, եւ եթէ ոչ մի ինչ եկած է անտի, պատճառն այս է՝ որ երկրաւոր կեանքը աւելի զգայուն փորձերու չիրնար հանդուրժել։ Այս կէտիս վրայ զգալի յայտնութիւնն՝ Աստուծոյ զոյութեան նկատմամբ եղածին անպատշաճութիւնքն կը ծնանի։ Եթէ մենք յայտնի վկայութեամբ մը ապահովուէինք՝ թէ մեզի ուրիշ օպաղայ աշխարհ մը պահուած է՝ համոզուած եմ թէ նոյն պահուն աշխարհիս ամեն ներկայ զբաղմունք կը դադրէին։ Այս աստուածային երանութեան պատկերացումն զմեզ տեսակ մը զմայլական թմրութեան մէջ կը ձգէր այս աշխարհիս մէջ։ Կը յիշեմ որ երբ Հնդկաստանէն եկող նաւով մը Գաղղիա հասայ՝ նաւաստեաց՝ երբ յայտնապէս հայրենի հողը տեսան՝ չատերը անկարող մնացին որ եւ է գործէ։ Ոմանք առանց անտի աչքերնին հեռացունել կարենալու կը դիտէին. ոմանք իրենց զեղեցիկ զգեստներն կը հաքնէին, իբր թէ այն վայրկենին վար ցամաք իջնէին. ոմանք իրենք իրենց կը խօսէին, եւ ոմանք կուլային։ Որչափ մօտենայինք այնչափ կ'աւելնար չփոթութիւնն։ Երկար տարիներէ հետէ բացակայ ըլլալով՝ չէին կշտանար ըլրոց դալարին՝ ծառերու տերեւները՝ եւ նոյն խօս ասիանց լոռով ու մամռով պատած ապառաժուտն դիտելէ, իբր թէ նորատեսիլ բան մ'ըլլար։ Ծնած գիւղերուն զանգակներու աշտարակները՝ զորս հեռուէն կը ճանչնային իւրաքանչիւր գիւղերով, եւ մի առ մի անուննին տսլով ուրախութեամբ կը խայտային։ Այլ երբ նաւը մտաւ ներս եւ քարտիկն վրայ բարեկամներն տեսան, իրենց հայրը, մայրը, կիներ, որդիքը, որոնք ձեռքերնին կը պարզէին արտասուած խառն ձայնով անուննին տալով, անհար եղաւ դէթ մին միայն նաւուն մէջ բռնել. ցտաբեցին ամենքն ալ զուրս, եւ այն նաւահանգստին սովորութեան համեմատ ուրիշ նաւաստիներ նաւուն պէտք եղած զօրքը կատարեցին։

Ուստի ինչ պիտի ըլլար՝ եթէ մենք այդ երկնաւոր հայ-

րենւոյն զգայական տեսիլն ունենայինք, յորում մեր ամենէն աւելի սիրածն եւ միայն արժանաւորն սիրոյ կը բնակի: Բոլոր այս կենաց դժնդակ եւ դատարկ վրդովմունքն պիտի վերջանային: Մի աշխարհէն դէպ ի միւսն անցըն իւրաքանչիւր մարդոյ ձեռքն ըլլալով՝ շատ շուտ կ'անցունէր, սակայն բնութիւնն խաւարաւ ծածկած է զայդ, եւ անցքին զլուսն պահապան զըրած է՝ սոսկումն ու տարակոյս:

Ա. Կ Ն Ա Ր Կ Մ Ը

Ս. Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Ի Թ Ղ Թ Ո Յ Վ Ը Ա Յ

(Շարունակութիւն տես է տարւոյ քիւ 24)

ԱՌ ՊՈՂԻԿԱՐՊՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԶՄԻՒՌՆԻՈՅ ՔԱՂԱՔԻՆ

Երանելի վկայիս թղթոյ եօթներորդ եւ վերջինն է այս: Զարմանք եւ անհաւատալի կը թուի՝ ոմանց այնչափ վրեպելն՝ մինչ զի ամեն տողի մէջ բացարձակ եւ ակն յայտնի հաստատական վկայութիւնքն անտեսելով՝ անհարազատ զրել զայս թուղթ. յաւելլով մանաւանդ նախնեաց առհասարակ վկայութիւնն Ս. Պողիկարպոս ինքնին իւր բանիւ կը վկայէ, եւ յանհնարինս կը կարգէ տարակոյս բառնալն. իւր խօսք Եւսեբեայ եկեղ. Պատմ. մէջ աւանդուած են մեզ այսպէս. Գրեցեք ինն դուք եւ իգնատիոս: Կը վկայեն այսոմ Ոսկերեւան, Դամասկացին, Հերոնիմոս, եւ այլք:

«Իմնատիոս որ է աստուածազգեաց՝ Պողիկարպոսի եպիսկոպոսի եկեղեցւոյ Զմիւռնիոյ քաղաքին՝ առաւել եւս եպիսկոպոսացելոյ յԱստուծոյ Հօրե եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ՝ բազում ողջոյն:»

Տպագիրն չունի առաւել եւս եպիսկոպոսացելոյ խօսքն. Ս. Յերոնիմոսի գործոյ մէջ՝ հաս. Ը, Յովբայ ի զլիւթն մեկնիչն կ'ըսէ. Որպէս Տէր ի տէրութիւնէն ամենայնի ճանաչի, այսպէս եպիսկոպոս՝ զի ի վերայ ամենայն արարածոց տեսուչ է: Այսպէս եպիսկոպոսացելոյ ի Հօրե խօսքն՝ ըսել է՝ յորոյ վերայ Հայր տեսուչ է:

«Յընդունելն իմ զմիտս քո՝ որ հաստատեալ է յԱստուած իբրեւ յանշարժ վէմ, փառաբանեմ, զի արժանի եղէ պատկերի քո անմեղի՝ որում Աստուծով փափաքէի։ Խնդրեմ ի քէն շնորհօքն՝ զոր զգեցեալ ես՝ առաւելու յընթացս քո գնացից. (Տպաղիրն փոխանակ զգեցեալ ես երկրորդ դէմքի առաջին կո դնէ) . եւ խնդրել յամենեցունց՝ զի կեցցեն։ — Տպաղիրն՝ եւ խնդրել վասն որդւոց մարդկան։

Տպ. «Եւ արդ հայցեա զպատշաճան, ջանիւ մարմնոյ եւ հոգւոյ. կալլիր հոգաբարձութիւն վասն միաբանութեան, վասն զի չիք ինչ առաւել քան զնա։

Յն. «Պահպանեա գտեղի քո կամ պանեա՛, կալ գտեղի քո ամենայն ջանիւ մարմնոյ եւ հոգւոյ . . . :

Ո՛րն է բնագրին խօսքն այս երկուքէն չդիտեմ։

Տպ. Բարձ ի քեզ զամենայն մարդ, որպէս եւ զքեզ բարձեալ է Տէր մեր Յիսուս Քրիստոս. երկայնամիտ լեր առ ամենեանեան սիրով, որպէս եւ առնեսդ իսկ։ Ազօթից ստէպ կաց, եւ խնդրեա զզոգօնութիւն առաւել քան զոր ունիսդ, արթուն կաց՝ որպէս եւ ես, անքուն ողի ստացեալ։ Ընդ ամենայն մարդոյ ըստ կամայն Աստուծոյ խօսեսլիր. զտկարութիւն ամենայն մարդոյ բարձ իբրեւ զայր կատարեալ. ուր բազում է աշխատութիւն՝ բազում է եւ օգուտն։

Յն. Տար ամենայնի՝ որպէս եւ քեզ Տէր, — եւ կամ ըստ հայերենին, բարձ զամենայն՝ որպէս եւ զքեզ Տէր. համբեր ամենայնի սիրով, որպէս եւ առնեսդ իսկ։ Յաղօթս անդադար փութա, առաւել քան զոր ունիսդ խնդրեա զզօնութիւն. (կամ խորհուրդ)։ Արթուն կաց, անքուն զօգիւ պահելով. ընդ առն առն ըստ Աստուծոյ կամայ խօսեաց, զտկարութիւն ամենեցուն բարձ, որպէս ախոյեան կատարեալ. ուր բազում վաստակ՝ բազում եւ օգուտ։

Սոյն փոքրիկ բաղդատականն բաւական ըլլայ ցոյց տալու՝ թէ այս եւ առ Զմիւռնիացիս թուղթք որչափ աւելի՛ դէթ համեմատաբար՝ առանց մեծի ալլայլութեան մնացած են ի Տպաղիրն։ Կրկնեմք, միշտ բաղդատաբար։

Անքուն զոգիւ պահելով, Դամասկացին գաջս (omma) կ'ըսէ փոխանակ ոգւոյն. Ըստ Աստուծոյ կամաց խօսեաց, ամենք փոխանակ կամաց կը կարդան միաբանութիւն (omothia)։

«Եթէ զբարիսն միայն զաշակերտեալս սիրես՝ ոչ են քեզ

չնորհք . այլ առաւել զչարսն հնազանդեցո՛ հեղութեամբ : —
Աջքի եկաւ Տպագիրն, պիտի ըսէ ընթերցողն . զի կ'ըսէ . եթէ
զբարիսն միայն աշակերտեալ սիրես՝ ո՞ր չնորհ է քեզ . . . կ'են-
թաղրուի զի անցեալ դերբայն իր հոլովական (հայց. յոգն.) ձե-
ւերն կորուսեր է . գաշակերտեալս . Այլ ըստ ամենայնի գեղե-
ցիկ է հետեւեալն :

« Ոչ եթէ ամենայն վերք միով դեղով բժշկին , այլ զգայ-
րացեայն (Տպագիրն կ'ըսէ, զհատեայն) կակղութեամբ հանգո :
Լեր խորագետ (Տպագիրն՝ իմաստուն) իբրեւ զօձ յամենայն ինչ,
եւ ամբիժ իբրեւ զաղաւնի : Վասն այսորիկ ես դու մարմնա-
ւոր եւ հոգեւոր, զի զորս երեւեացին առաջի երեսաց քոց շա-
հեցիս . եւ զորս ծածուկք են՝ խնդրեա եւ յայտնեցին քեզ .
զի եւ ոչ միով իւրք պակասեալ զտանիցիս, այլ յամենայն պար-
զեւս առաւելացիս : Խնդրէ գրեզ ժամանակն՝ որպէս նաւա-
վարք գիողմ, եւ որպէս ալեկոծեալք զնաւանգիստ, որպէս
զի արժանի լիցիս Աստուծոյ :

Դիտելի է այս տողերուս մէջ՝ զի Իգնատիոսի սոյն խրա-
տականքն ամենեւին Պողիկարպոսի հռչակեալ առաքինութեանց
չեն շնորհ, եւ իբր կտակածանաց կէտ թղթոյս վաւերակա-
նութեանն չէ բնաւ . բաւական է նկատել հինաւուրց ծերունին,
աիօք եւ փորձառութեամբ քան զՊողիկարպոս պատկանելին :
Նոյն բանն կը տեսնեմք ի Պաւղոս առ Տիմոթէոս եւ Տիտոս
թղթովքն : Տպագիրն՝ լեր իմաստուն իբրեւ զօձ յամենայն ինչ
ըսելէ յետոյ կը յաւելու , եւ որոց արժանի են՝ անբիժ իբրեւ
զաղաւնի . միջանկեալ խօսքն չունի յոյնն :

Յունականին վերջին տան խնդրէ գրեզ ժամանակն հակա-
սական թուեցաւ ինձ հետեւորդին հետ բաղդատելով . լաւագոյն
կարծեմ հայերէնն ի Տպագիրն սակաւ մի ուղղելով ըսել . Խըն-
դրեա դու քեզ ժամանակ՝ (Տպագիրն ի ժամանակի)՝ իբրեւ ըզ-
նաւալար գիողմ . . . որով աւարտման յետ կը հաշտի իմաստն :

« Արթուն կաց իբրեւ զքաջ զինուոր Քրիստոսի , (Յն.
կ'ըսէ . Հսկեաց որպէս Աստուծոյ ախայեան) . վասն զի զոր
իճջ խոստացեայն է մեզ՝ (յոյնն այս ամբողջ բացատրու-
թեան տեղ կը դնէ to thème . զոր կրնամք ի վարձ կամ ի
փոխարէն թարգմանել, եւ կամ ինչպէս Տովրիթ Դ. 10 կը կար-
դամք՝ զի գանձս բարիս գանձեցես քեզ յաւուրն կեանաց քոց ,
ի գանձ կամ ի տրիտուր . սոյն վերջնոյս յունականն նոյն բանն
է) , անապականութիւն եւ կեանք յաւիտենից : — Տպագիրն

չունի առաջինն, եւ երկրորդէն յետոյ յաւելուած մը կ'ընէ, որ ոչ անցանէ . — զոր զու իսկ ստուղիւ գիտես : Յամենայնի անձն իմ հզիցի փոխանակ անձին քում, եւ կապանք իմ՝ զոր սիրեցերս : Որք արժանահաւատք երեսին եւ ուսուցանեն օտար ուսումն՝ մի զարհուրեցուցեն զքեզ. հաստատուն կաց իբրեւ զսալ որ հարկանի, քանզի մեծի ախոյենի է հարուածիլ եւ յաղթել : Եւ առաւել վասն Աստուծոյ ամենայնի պարտ է մեզ համբերել, զի եւ նա համբերեացէ մեզ : Փութացող լեր առաւել քան զոր ետդ :

Որք արժանահաւատք երեսին . . . մի՛ զարհուրեցուցեն զքեզ. Տպաղիրն կ'ըսէ վրիպակաւ, իսկ այնորիկ որք համարինն երբ իցեն ինչ . . . եւ ապա՝ մի՛ զարմանար ընդ նոսա. վերջինս վրիպակ չէ, զի katapliissô բայն ի միջականին զարմանալ ըսել է. բայց յայնժամ առաջին տողն ուղղելու է այսպէս. Ընդ որս արժանահաւատք երեսին . . . մի՛ զարմանար (ընդ նոսա) :

Հաստատուն կաց իբրեւ զսալ որ հարկանի, քանզի մեծի ախոյենի է հարուածիլ եւ յաղթել : Տպաղիրն ունի՝ կացչիլ ի ճշմարտութեանն՝ իբրեւ զայր հօր որ հարկանի եւ ոչ անկանի, քանզի հօրին է հարուածիլ եւ յաղթել : Սոյն վրիպակն կրնամք զիւրաւ մեկնել. զայր հօր կարդալ սալ հօր, ձեռագրչաց վրիպակն. իսկ փոխանակ ախոյենի՝ հօրին *ըսելն կը մեկնուի. athlitis յունականն ի Տպաղրիս քիչ առաջ տեսանք զինուոր թարգմանուած . արդ զինուորն եւ զօր եւ հօր թէ ձայնիւ եւ թէ զրութեամբ նման իրարու՝ կրնայ չիթթութեան եւ վրէպ զրութեան պատճառ եղած ըլլալ. վարձեալ սոյն նմանութեան պատճառաւ՝ կրնամք կարծել թէ հօր բառն վարած ըլլայ թարգմանիչն ինքնին : Սոյն սալին եւ հաստատութեան օրինակն ունի Ս. Եփրեմ ԼԳ :

« Ի միտ առ զժամանակս եւ սպասեաց որում ի վեր է քան զժամանակն. (Տպաղիրն չունի՝ սպասեաց, հետեւաբար յարաբերականն հայցական հոլով, իսկ շարունակութեամբն կրկնելով խօսքն կ'ըսէ, եւ ակնկալ այնմ՝ որ ոչ ունի զժամանակս), անժամանակին, անտեսանելոյն՝ որ վասն մեր տեսաւ, անշօշափելոյն, անչարչարելոյն՝ որ վասն մեր չարչարեցաւ, եւ զամենայն ինչ ամենայնիւ վասն մեր կրեաց : — Յաջորդ տրական հոլովքն յուղղական են ի Տպաղրին : Դիտէ անտեսանելի բառն :

« Զայրիս մի՛ արհամարհեսցես, զինի Տեսուն (չիք ի Տպաղրին) զու ինքնին հոգասցես զնոսա : Մի՛ ինչ գործեսցի առանց

քո կամացդ, եւ ոչ զու գործեսցես ինչ առանց Աստուծոյ կամայն, որպէս եւ չես իսկ գործեալ (Աստէն յունական օրինակաց ոմանք կը յաւելուն, եւ չես իսկ գործեալ կամ լաւ եւս՝ որպէս եւ չգործես իսկ՝ բարիոր կացեալ) : Միշտ բայն ներկայ է սահմանականին, մինչ Տղազիւն անցեալ կատարեալ : Տղազիւն յունականին վերջին կրկին բառերն նոր տողիւ կը լինէ . Այլ բարւոր կաց եւ հանապազ ժողովեա գեկեդեցի . . . այլ զի յունական օրինակաց ոմանք չունին այդ կրկին բառքն՝ չկարացի որոշել տեղին :

«Հանապազ ժողովեսցի եկեղեցին, եւ զամենայն մարդ յանուանէ կոչեալ» : Տղազիւն խօսքն լաւ եւս կը յարմարի իմաստին . Հանապազ ժողովեա գեկեդեցի եւ զամենայն մարդ յանուանէ կոչեալ Զծառայս եւ զաղախնայս մի՞ տրհամարհեսցես, նոյնպէս եւ նոքա մի՞ հպարտացին, այլ ի փառս Տեառն առաւել եւս ծառայեսցեն, զի առաւել եւս ազատութիւն զտեսն յԱստուծոյ : Մի՞ սիրեսցեն ազատել ի հասարակաց՝ զի մի՞ դատնիցին ծառայք ցանկութեանց» :

(Շարայսրեյի)

ՏԻԵԶԵՐԱՅ ԾԱԴՈՒՄՆ ԵՒ ՄՈՎՍԷՍ

Ծննդոց զրոց եւ Դիտութեան հակառակսն զիրքն հաստատելու համար՝ պէտք է լաւ հասկնալ Մովսիսի զրաժն եւ Դիտութեան պահանջածն :

Ենթադրելով պահ մը թէ Դիտութեան պահանջն ուղիղ ըլլայ՝ Ծննդոց տուածին մանաւանդ հակառակութեան նիւթ եղած կէտերուն մէջ հաստատական վճիռ անհնար է տալ : Եւ ինչ կէտերու մէջ Մովսէս Դիտութեան հակառակ է, ըստ հակառակորդաց : Արարածոց երեւման ժամանակագրական հաշիւներու եւ մանաւանդ անոնց տեւողութեան միջոցին է՝ որ զիտական հաշիւն յայտնութեան տուածին համապատասխան չթուիր : Սակայն ըսել թէ Մովսէս եւ Դիտութիւն կը հակառակին՝ ուղիղ չէ . վասն զի ժամանակագրական հաշիւ գործածած չէ Մովսէս : Իբր օրինակ կը տեսնեմք որ Ծննդոց զիրքն հաստատապէս չըսեր թէ հաստատութիւնն լուսէն վերջ ստեղծուե-

յաւ. չըսեր թէ ցամաքն ու ծովերն հաստատութիւնէ վերջ դործուցան. եւ ոչ խոյ արարածոց մէջ օրոքան մը անջրպեան կը վատահացունէ, թէպէտ եւ օրն զանազան բացատրութիւններով մեկնուած ըլլայ հիմայ : Մովսիսի ամբողջ այդ նկարագրին մէջ միակ հաստատուն կէտ կայ՝ այս է թէ տիեզերք ամբողջ առանց բացառութեան՝ միայն Աստուծոյ ձեռակերանն, եւ այդ վեց բաժանումն՝ որով նկարն կը կատարէ՝ նորին Աստուծոյ կամաց հրամանն է : Այս կէտիս դէմ Գիտութիւնն ըսելիք չունի :

Այս բացատրութիւն ընդունելի է թէ ուղղափառ կրօնից եւ թէ մեկնչացի : Ըստ այսմ Մովսէս արարչութեան պատմական եղելութիւնն կը դրէ, տիեզերաց զանազան մասունքն՝ մեր աչքին երեւցածին կարգաւ քաղելով : Նախ վերինն, լուսաւորն, երկրորդ միջինն, հաստատութիւնն, որով վերին եւ ներքին ջուրք կ'անջրպետին. երրորդ ստորինն, երկիրս իր ամեն բոյսերով, եւ իր մասերով : Բնաւ այս պատմութեան մէջ ժամանակագրական հաշիւն չվրդովեր զինքը :

Արարչագործութեան ամեն մասին՝ եօթնեկին օրերէն մին կը սեպհականէ. այսպէս.

«Եւ ըսաւ Աստուած. Ըլլայ լոյս, եւ եղաւ լոյսն.

«Եւ տեսաւ որ բարի է : Եւ անջրպետ դրաւ լուսոյն ու խաւարին մէջ :

«Եւ լոյսն օր կոչեց եւ խաւարն դիշեր : Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն, (24 ժամ) օր մի. (միաշաբաթի) :

«Եւ բսաւ Աստուած. ջրոց մէջ հաստատութիւն ըլլայ, եւ ջուրերն ջրերէն անջրպետին :

«Եւ ըրաւ Աստուած հաստատութիւնն, եւ վերին ջրերն բաժնեց վարիններէն . . .

«Եւ հաստատութեան անուն տուաւ երկինք, Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն, (24 ժամ) օր երկրորդ. (երկուշաբթի) :

Ինչպէս որ Աստուծոյ դերագոյն ճարտարապետին գործն վեց բաժանումն ունի, այսպէս ալ մարդոյ՝ խոնարհ ստեղծուածոյն գործն պէտք է ըլլայ վեց օր, իսկ եօթներորդն՝ հանգիստ : Ուստի Մովսիսի նկարագրին՝ ըստ երեւութին տիեզերաց պատկերն ամփոփելով՝ երկրագրական կամ աստղաբաշխական վճիռ մը նկատել զայդ աւելորդ է : Կրնար Մովսէս բոլորովին ուրիշ կարգ մը դժեւ իր ընտրած ընթացքին, եւ այնու իսկ զի-

տութեան առանց հակառակելու ընթանալ, այսպէս ուզեր է, այսպէս լաւ համարեր է, այսպէս ներշնչուեր է. չհակառակիր Գիտութեան պահանջմանց: Դիտենք՝ որ Մովսէս՝ երբայեւոյն ոչ աստուգարաչխութեան եւ ոչ ալ երկրաբանութեան վարժապետ սահմանուած էր, այլ աստուածուստ առաջնորդ:

ԼԵՌՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՄԱՐԴՈՅ ՇՆՁԱՌՈՒԹԻՒՆՆ

Պ. Ugolino Mosso իտալական գիտութեանց Կաճառին Regii Lincei ի մատոյց բարձրագոյն լեռներու վրայ բնածխական թթուտի պակասութեան վրայ ուսումնասիրութիւն մը:

Ահա իր քննած բարձրութեանց չափն.

Դուրինի բնախօսական Կաճառն, 276 մեղր բարձր:

Երրորդութիւն Կրէստնէյ, 1627 մեղր:

Ինգրական Ալպեանք, Մոնդէ Ռոզայի ճամբուն վրայ, 2515:

Մարգարիտա Թաղուհի, Լինդիի իւրճիթէն, 3047 մեղր:

Կնիֆէզդիի իւրճիթէ, 3620 մեղր:

Մարգարիտա Թաղուհւոյն իւրճիթն, 4560 մեղր:

Ամենէն բարձր կէտն է քննութեան այս վերջինն:

Ամեն նախազգուշութիւն ըրին որ վերելակներն յողնելով փորձին արդիւնքը չփճանայ. առ այդ նոյն գիտնականին հնարած յատուկ գործիով բնածխական թթուտի քանակն չափաւորեցին: Վերելակներն երեք Ալպեան զինուորներ էին, 3000 մեղր բարձրութեան մթնոլորտին վարժ, որով մեծ ազդեցութիւն չպիտի կրէին:

Ի Դուրին երեք զինուորք կէս ժամուան մէջ արտաշնչած օդով՝ իւրաքանչիւրն արտաքսեց 16 կրամ, 12՝ կր. 6, եւ 12 կր 5, բնածխական թթուտ: Այս թիւեր կը փոփոխին եւ համեմատական են ներշնչուած օդոյն հետ. այսպէս կէս ժամուան մէջ ծծուած օդն երեքէն իւրաքանչիւրին համար՝ էր 270 լիտր, 205 լիտր, եւ 200 լիտր: Այս իբր սկզբնակէտ:

Մարգարիտա Թաղուհւոյն իւրճիթն հասնելով թէպէտ եւ օդն երրորդ մասամբ անօսր էր՝ սակայն ոչ ոք անհանդստութիւն զգաց: Կնիֆէզդիի իւրճիթն մօտ չնչառութիւնն ալայիցաւ: Արշաւանաց զլուխն քնոյ ժամանակ չնչառութեան պար-

բերական խանգարումն կ'ըզգար . իսկ զինուորք՝ եւ ոչ ինչ : Յաջորդ օրն արչաւանքն իր նպատակին հասնելով (4600 մեզր.) բարձունքին աղդեցութիւնն զգալի եղաւ, ամենքն ալ հիւանդացան : Պարբերական շնչառութիւնն այնպէս զգալի էր յիս , կ'ըսէ Պ. MOSSO , որ զիշերն չէի կարող քնանալ . ընդերկար ներշնչութիւնքն՝ որուն պէտք ունէի՝ արթուն կը պահէին զիս : Զինուորներն աւելի կը դիմանային եւ միայն զիշերներն շնչատ էին : »

Ահա այս բարձանց վրայ կէս ժամուան մէջ ծծուած օդոյ քանակն եւ վերածխուած բնածխականին չափն : Առաջինն 276 լիտր օդով 15 կրամ բնածխական արտաքսեց , երկրորդն 192 լիտրով 11 կրամ, երրորդն 267 լիտրով 15 կր. 5 :

Եթէ մէն մի կայից վրայ իւրաքանչիւրին կէս ժամուան մէջ շնչած օդն եւ արտաքսած բնածխականն առանձին սիւներով կարգեմք, եւ երրորդ սիւնակի մը մէջ այս քանակներուն համեմատութիւնը նշանակենք, կը տեսնենք որ բարձրութիւնն բնածխականի վտարման վրայ աղդեցութիւն չունի . ինչ որ էր ի Դուրին՝ գրեթէ նոյն է գէթ մինչեւ Մարգարիտայ Ուրճիթն : Նոյնպէս իբր հետեւանք կը տեսնուի՝ որ կայից բարձրութիւնն շնչուած օդոյ քանակին վրայ մեծ աղդեցութիւն չունի : Ի Դուրին 270 լիտր ծծող զինուորն՝ 4560 մ. բարձանց վրայ 276 կը ծծէ : Յայտնի է որ շնչառութեան հաստատուն չափն հանդարտութեան պահուն է, վասն զի որ եւ է շարժմունք կամ աշխատութիւն շնչառական շարժմունքն կ'երազեն :

Ի Դուրին դառնալով Պ. MOSSO իր փորձերն աւելի առաջ մղել ուղեւով բնախօսական Կաճառին օդահանութեան սենեկին մէջ փակեց ինք զինքն ու անօսրացուց օդն, մեղմիւ ճնշումն պակսեցունելով : Անօսրութեան 6405 մեզր բարձրութեան հասնելով տեսաւ որ արտաշնչուած բնածխականն գրեթէ փորձէն առաջ զիտուածին հաւասար էր. միայն շնչառական շարժմունք աւելցած էին : Առաջ տանելով քննութիւնն՝ մինչեւ մեղմիւն 30 հարիւրորդակրամն օդն անօսրացուց, ըսել է՝ 7402 մեզր բարձրութիւն : Տասներկու վայրկեանի մէջ դադրեցուց փորձը, վասն զի շնչատումն սկսաւ, ուչ դնելու կարող չէր : Երկրորդ անգամ նորէն սկսաւ փորձը, այլ այս անգամ 11 վայրկեանէ դադրեցուց, առանց զիտնալու թէ ինչո՞ւ . միայն միտքն ու յիշողութիւնն պակսած էր, ջղային ու նեարդային դրութիւնը այլայլած էին . զրկու անգամ կարողութիւն չէր մնացած :

Այս երկու անկատար փորձերուն արդիւնքն յոյց կուտան՝ որ 30 հարիւրորդամեղր մնդկի ճնշմամբ՝ (7402 մեղր)՝ օդոյ ծծումն առատ առատ է, իսկ բնածխականին վտարումն շատ տկար։ Սակայն զիանալով փորձին պայմաններն՝ հաստատ հաւատք ընծայել այդ արդեանց հնար չէ։

Ահա Պ. MOSSO ի հետեւութիւնքն. վերի քննութիւններէն կը հետեւի՝ որ մարդ մինչեւ 6400 մեղր բարձր լեռներուն վրայ գրեթէ ծովու մկանանց մօտ ծծածին հաւասար քանակաւ օդ կը ներչնչէ։ Օդոյ անօսրացումն թթուածինն կը նուազէ, այլ այս քանակն 34 հարիւրորդամեղր ճնշմամբ իսկ բուսական է արեան պահանջն գոհացունելու, նոյն մնալով չնչառութեան շարժման թիւն։ Դուրինի բարձրութիւնն ծովու երեսէն 277 մեղր ըլլալով, 6400 մեղր բարձանց վրայ արտածխուած բնածխական թթուան մեծ տարբերութիւն չունի։

ԵՐԿՐԱԳՐԱԿԱՆ

ԳԱՆՍԵԱՆ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Հիւսիսային Ամերիկայի լայնքն կտրող երկու երկաթուղի կայ. մին Միացեալ Տէրութեանց, միւսն Գանատեան։ Առաջինն Նիւ Յորքէն սկսելով կը բարձրանայ դէպ ի Նիւակարա եւ լծին սքանչելի եզերքէն սահելով կը հասնի Միչիկան լճին եզերքն բնակող Չիգակո. անկէց մինչեւ Նեպրասքայի արեւմտեան սահմանավայրն Դուրան դաշտերէն անցնելով կը հասնի Ժայռուտներն, ուսկից մինչեւ Մեծ Աղի լիճն, եւ ապա Գալիֆոռնիոյ լեռներէն կը սահի մինչեւ Սան Ֆրանչեսքոյ խաղաղական Ովկիանու եղերքն։ Իսկ երկրորդն՝ աւելի նոր, եւ ոչ այնպէս զուարճալի, սակայն աւելի համառօտ է. որով Լիվրբուլէն մինչեւ Ճաբոնի եւ Չինաստանի նաւահանգիստներն քանի մը հարիւր մղոն աւելի մօտ։ Հալիֆաքսէ մինչեւ Վանգուվը 900 հազարամեղր Նիւ Յորք Սան Ֆրանչեսքոյէն աւելի համառօտ է։ Հալիֆաքս Անգլիական մարտային նաւահանգստէն մինչեւ խաղաղական եօթն օր եւ երկու ժամ կը տեւէ։ Վանգուվըի նաւահանգիստն կանոնաւոր կերպով դէպ Արեւելեան Ասիա եւ Ովկիանիա գնացող նաւեր պատրաստ են։

Այս անհատնում գծին սկզբնաւորութիւնն 1881ին եղաւ տէրութեան ձեռամբ, այլ յետոյ Գանատեան ինքազական կոչուած ընկերութեան յանձնուեցաւ, առ առաւելն տասը տարիէ ի դուռն հանելու պայմանաւ։ Եռանդուն աշխատութեան արդեամբ 1886 ին լմեցաւ եւ սկսաւ. 450 միլիոն ֆրանքի պտուղ։

Հալիֆաքսէն մեկնելով Գանատեան ինքազական երկաթուղին Միացեալ Տէրութեանց մէջ կը մտնէ եւ Մոնրէալ քաղաքին հանդիպելով կ'ելլէ դուրս։ Մինչեւ Ուինիբըկ՝ Մանիտպայի մայրաքաղաքը՝ նշանաւոր բան մը չկայ։ Այս քաղաք վաճառականութեան կեդրոն մ'է, Աէն Լորանի ափունքին վրայ, որ 3 հազարամեղր լայնութիւն ունի այս անդ։

Ասկէց անդին շոգեկառքն մեղմիւ ժայռուաւ լեռներն կը բարձրանայ եւ անքնակ դաշտերէ կ'անցնի։ Գանատա՝ թէպէտ եւ Եւրոպայի ընդարձակութիւնն ունի, այլ բնակիչն 5 միլիոնէ աւելի չէ։ Որոնց 4/5ն արեւելեան հին զաւառներուն մէջ կը բնակին։ Ուինիբըկ քաղաքն հատերու մշակութեան սահմանաւ ընդարձակ դաշտերուն մէջ կանգնուած է, եւ Հիւսիսային Ամերիկայի մեծամեծ լճերէն ողի կ'առնէ։

Քաղաքին սկզբնաւորութիւնն 1879 ին է, 1880 ին 300 բնակիչ ունէր. այլ 1891 էն ի վեր 25,600 ն սկսաւ անցնիլ, եւ այսօր 40,000 հոգի են։ Ամերիկեան քաղաքի ճիշդ պատկերն է. աներն փայտէ են ու միայարկ, իսկ քովն ութայարկ վաճառատուններ։ Գանատեան Չիքագո կը կոչուի։

Ժայռուա կոչուած լեռներն չհասած շոգեկառքն Ռէճինա քաղաքին քովէն կ'անցնի. ասոր քով երկու հետաքրքրականք կան։ Հնդիկներու արուած երկիրն, եւ ազգային Մարգն Հընդիկներու բաժինն յուռթի ձորահովիտ մ'է, ուր կը բնակին 600 հոգի. հողը վիճակներու բաշխուած է գրեթէ 16 հարիւրակալ ընդարձակութեամբ. (100 կալ = 10,000 քառ. մեղր). իւրաքանչիւր ընտանիք ըստ իր կարեւորութեան 1 է մինչեւ 3 վիճակ կ'ընդունի, միանգամայն առ անձն 25 ֆրանք, մշակութեան գործիք եւ սերմն։ Իսկ ծերերն եւ տղայք կառավարութեան զանձէն կ'ապրին ու կը խնամուին։

Ազգային Մարգն 40,000 մեղր երկայնութիւն ունի եւ 16 հազար լայնութիւն, մէջը բաղմաթիւ ջրոց հոսանքներ եւ ջրհոսներ կան, նոյնպէս լիճ մը, Սատանի լիճն։

Այս անհատնում փապուղիքն կ'ըսկսին, եւ շոգեկառքն ահալին լարձրութեան կը հասնի, մինչեւ 1280 մեղր զաղաթնակէան. ուսկից բնութեան ամենէն հրապուրիչ տեսարաններէն սողոսկելով՝ դէպ ի ինքազական Ուինիանու ափունքն կը խոնարհի։

ԱՍՏԻ ԱՆՏԻ ՔԱՆԻ ՄԸ ԱՌԱՅՆԵՐ

Կեանք սուղ, արուեստ երկայն,
 Խորհուրդք մարդկան, կամք Աստուծոյ,
 Ոչինչ առանց վաստակոց,
 Տգիտութիւն ի ստրկութիւն ածէ,
 Եղի զմէս մի հաւասար կշռոց,
 Որ ինչ բարի ինձ՝ այն ոչ քեզ,
 Ի հատոյ մանանխոյ բուսանի ծառ մեծ,
 Ըստ ծնողին ծնեալն,
 Որդի հարազատ զնմանութիւն ծնողին բերէ,
 Ի խաւարել արեւու տեսանի մեծութիւնն,
 Լաւ է առաջին քան վերջինն յազգատոհմի,
 Ձկնի մրրկի՝ պայծառութիւն օգոց,
 Անցելոյն միշտ շատ են բարիք,
 Որ զչար դործէ ատեայ զլոյս,
 Լաւ է քայլ մի տուրնջեան՝ քան երկու զիշերի,
 Ամենայնի ժամանակ է,
 Նուազունք բազումք առաւելուն յոյժ,
 Ընդ առաւօտս ցնդին երեկոյին ուրախութիւնք,
 Ատելութիւն վարձէ որ զապերախտն բռնադատէ,
 Քան զգօտի ոսկի՝ համբաւ բարի,
 Թշուառութիւնք յորդ են,
 Խեւին (անառակին) խրատն, սեւին սապոնն,
 Բարեկամութենէ դադրողն՝ բարեկամ եղած չէ,
 Աղուէս ոչ մերկանայ զնոնդութիւն,
 Ձկունք մեծամեծք զմանունս կլանեն,
 Ձադու աչաջուր երկինք են բունիկ,
 Որ բարիս յորդէ՝ ոչ ի բարեայ պակասէ,
 Արտօսը փութով ցամաքի :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՒՀԻ ՄՈՆԻԳԱՅԻ



ԹԱՐԳ ՄԱՆԵՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՔԻԿԵԱՆ

(Շարունակութիւն տես քիւ 1)

Սրբունի Մոնիգա նաեւ չկրնար զսպել իւր ուրախութիւնը. ինքն ալ արցունքներովն Օգոստինոսը կը թրջէ, եւ զուարթացել նայուածքը չկրնար վերցնել անոր վրայէն: Անտարակոյս Մոնիգայի աղօթից մէկ հատիկ նոյառակը իւր զաւակը բարի քրիստոնեայ, բարեպաշտ, կարգուած, մէկ խօսքով փրկութեան ճամբուն մէջ տեսնալն եղած էր. եւ եթէ Աստուած պարգեւելու ըլլար իրեն այն շնորհքն, այնպէս կուգար իրեն որ այն ժամանակ երջանիկ կրնար մեռնիլ:

Կամայ կամայ ներքին այլայլութիւնը հանդարտելով՝ Օգոստինոս կ'սկսի խօսիլ. եւ անոր բերնէն լսած առջի խօսքերէն՝ Մոնիգա կ'զմայի, կը հիանայ. քրիստոնեայ ըլլալը չէր բաւեր իւր որդւոյն, այլ հիմա զղաստութեան եւ առանձնութեան ետեւէ կը հաւաչէ. աշխարհքիս ունայնութիւններն արհամարհելով՝ բոլորովին հրաժարիլ կը բաղձայ աշխարհքէս: Ի՞նչ մեծ ուրախութիւն չըզգար Մոնիգա այս բաներս լսելով. ո՞վ զիսէ թէ նոյն վայրկեանը չնորհած չըլլայ Աստուած իւր աղախնոյն հեռատես նայուածք մը ապագային մէջ, Օգոստինոսին փառքը ցոլցնելով իրեն, եւ քսան տարի կրած վշտաց եւ անձկութեանց փոխարէն, մխիթարած չըլլայ զանիկա, թոյլ տալով որ տեսնայ իւր որդւոյն ճակոխն վրայ իրրեւ եկեղեցւոյ վարդապետ եւ իւրեւ սուրբ, այն կրկին լուսազարդ սլսակը:

Ի՞նչ երջանիկ վայրկեան է այն, յորում մայր մը կը գտնայ իւր կորսուած զաւակը. ո՞հ, հապա ի՞նչ անհամեմատ երջանկազոյն չեպտուիր այն վայրկեանը յորում քրիստոնեայ մայր մը կը տեսնայ իւր որդւոյն հոգւոյն մէջ կորսուած հաւատքին, մաք-

րութեան եւ առաքինութեան դարձեալ ծագումը , մանաւանդ թէ երբ կը նշմարէ ապագային մէջ նոյն զաւկին՝ եկեղեցւոյ լոյս, փառք եւ ախոյեան հանդիսանալը :

Միլանու մէջ դեռ կը ցուցուի այն սենեակն՝ որուն մէջ սրբուհին կ'աղօթէր. այն պարտէզն՝ յորում այն անզուգական դէպքերը կատարուեցան. եւ դեռ երկայն դարեր պիտի ցուցուի Յիրաւի այն երիտասարդ պատանւոյն գեղեցկութիւնը, բոցաճաճանչ հանճարը, փափկասուն սիրտը, յանցանքներն եւ յանցանալը մէջ փառաւոր թախծութիւններն , որոնցմով թէ՛ անմեղ թէ՛ յանցաւոր, ամէնուն սէրն եւ գութը շարժած է. անվերջանալի ընդդիմութիւնները, ճիչերն եւ տաղնապն , որոնցմով վիրաւորուած արծւոյ մը պէս պիտի չուզէ անձնատուր ըլլալ . իսկ այն ընդդիմութեանց առջին՝ Աստուծոյ համբերութիւնն եւ երկայնամիտ գթութիւնն, որով կը հեղու իւր չնորհքն անոր սրտին մէջ կամաց կամաց , այնպիսի նազելի գթով մը՝ որ յաղթութիւնը պիտի վաստկի առանց անոր անկախութիւնը բռնաբարելու, եւ պիտի բարձրացնէ զանիկա ճշմարտութեան , աստուածասիրութեան ամենավերին զաւթնակէտը. եւ աւելցնելով այս տեսարանին վրայ վերջին գեղեցկութիւն մ'ալ, վասն զի առանց անոր չենք կարծեր որ տեսարանը կատարեալ ըլլայ, այսինքն այն աննման մօր արյունքներն, որոնք կ'ստիպեն զԱստուած հասնելու իւր որդւոյն օգնականութեան, ահաւասիկ ասոնք այնպիսի բաներ են զորս մարդ չկրնար մոռնալ երբէք . եւ մինչեւ դարերու վերջը պիտի դայ եւ սեմնայ , միշտ այն սեղուանքն ուր այսպիսի սքանչելիքներ կատարուած են :



Գ Լ Ո Ի Խ Ժ Գ.

Քառաբան. — Սրբուհի Մանգա Օգոստինոսը մկրտութեան սուրբ խորհրդոյն պատրաստելու համար, իրեն հետ գեղ կ'երթայ. —

Փիլիսոփայական բանակցութեանց ներկայ կը գտնուի. —

Քրիստոնեայ Պղատոնին մուրը. —

386 Սեպտ. ամսէն — 387 Յունուար ամիսը.


«Ո՛վ Աստուած իմ, ես քու ծառայդ եմ, վասն զի քու ազախներէդ մին ինծի մայր առերի: Խղեցիր իմ շղթաներս, եւ ասոր համար պարտական եմ միշտ մատուցանելու քեզի զովաբանութիւն: Սիրտս եւ լեզուս օրհնեն զքեզ, եւ բոլոր ոսկերքս երգեն՝ ըսելով. «Տէր, ո՛վ նման է քեզի:» Իրենք խօսին, եւ դուն, Տէր իմ, պատասխան տո՛ւր, ըսէ հոգւոյս՝ «Ես եմ քու Փրկիչդ:» Ո՛վ Քրիստոս Յիսուս, օգնական եւ Փրկիչ իմ:»

Ահաւասիկ Օգոստինոսի սրտին հիացման եւ երախտագիտութեան առաջին հառաչանքը. եւ նոյն ատեն երկրորդ հառաչանք մ'ալ կ'արձկէ ոչ սակաւ զօրաւոր եւ ոչ սակաւ քաղցր. կը զգայ հիմա որ սիրտը նորանոր սուրբ զգացմամբ զեղուն է, այնպիսի զգացմամբ՝ որոնց ճաշակը մինչեւ ան ատեն առած չէր ամենեւին. առջի օրուան ախորժած եւ սիրած բաներն, այսօր զգուանք կը շարժեն: «Ինչ ուրախութիւն եւ գոհութիւն չէի զգար, կ'ըսէ, ունայնութիւններէ հրաժարելուս վրայ. կը հալածէիր զանոնք իմ սրտէս, եւ անոնց տեղը դուն տէր կ'ըլլայիր սրտիս, դուն, ո՛վ Աստուած իմ, քաղցրագոյն քան զամենայն քաղցրութիւն, պայծառագոյն քան զամենայն պայծառութիւն, մտերմագոյն քան զամենայն մտերմութիւն, մեծագոյն քան զամենայն մեծութիւն: Սիրտս ազատ էր փռւծ եւ ունայն հողերէն, հարստանալու բաղձանքներէ եւ յանցաւոր հաճոյից խուզարկութենէ. կը հրճուէի, կը ճռուողէի քու աչքիդ առջին, ո՛վ լոյս իմ, փրկութիւն իմ եւ ամենայն ինչ իմ:»

Սրբուհի Մանգա կը զիտէ զմայլած Օգոստինոսի հոգւոյն այս նորաբոյս զգացմունքը: Իւր սիրան ալ իրենինն պէս բորբոքած է. ինքն ալ նոյն ցնծութեամբ կը ցնծայ, եւ իւր ձայնն այն նորածին երգոց հետ խառնելով, կը քաջալերէ իւր որդին, եւ կաթողին խնամքով մը կ'առաջնորդէ Օգոստինոսը՝ տակաւին անփորձ, շնորհաց եւ սրբութեան այն փառաւոր ճամբուն մէջ, յորում ինքն արդէն յառաջացած է:

Օգոստինոս առանձնութիւն մը կը վնասէ, որպէս զի կա-
րենայ ըստ հաճոյս օրհնել եւ դովել զԱստուած: Դժբախտաբար
ղրադմունքը շատ է. չաբաթը քսնի մը անդամ տաւնաբանու-
թեան հրապարակաւ դաս կուտայ: Մարտիրոսութիւն է քա-
շածը. ուստի իւր առաջին մտմտուքը ճարտասանութեան դա-
սաւորութենէ բոլորովին հրաժարիլն է. սակայն միանգամայն
Օգոստոս ամիսը լիննալու վրայ ըլլալով, հանգստեան օրերուն՝
որ Սեպտեմբեր տասնըվեցին կը սկսի, հազիւ քսան օր ննացած
էր. ըստ այնմ պատշաճ կը դատէ համբերել մինչեւ այն օրը,
եւ այն ժամանակ առանց աղմկի, առանց այլոց ուշադրութիւնը
գրգռելու իւր վրայ, եւ առանց մատնելու աշխարհքիս դատո-
ղութեան այնպիսի գործողութիւն մը, որուն վկայ մի միայն
Աստուած ըլլալու էր, քաշուի իւր մտատանջ զբաղմունքներէն:
Եւ այսպէս խորհրդածելուն պատճառը՝ այլոց դատողութենէ
վախնալն էր արդեօք. քան իցի. «Քու սիրոյդ սլաքներովը վի-
րաւորած էիր իմ սիրտս, ո՞վ Աստուած իմ, եւ քու ձայնդ կը
թափանցէր աղիքներուս մէջ հրաւառ սլաքներու նման, եւ քու
ծառաներուդ բարի օրինակները՝ զորս ինձմէ առաջ դարձուցեր
էիր ի խաւարէ իւրոյս, ի մահուընէ՝ ի կեանս, այնպիսի ուժգնու-
թեամբ կ'աղղէին հոգւոյս վրայ, որ ո՞ր եւ իցէ հակառակ հով մը
որ մարդու նննդաւոր լեզուէն փչելու ըլլար, փոխանակ մարկ-
լու այն ներքին կրակն, աւելի եւս կ'արծարծէր»: Բայց թէպէտ
եւ չար լեզուներէն չվախնար, գովասանքներէ գէթ պէտք չէ՞
որ զգուշանայ. ինչու որ նոյն ատենը թէ որ հրաժարականը
տալու ըլլար, ամէնուն ուշադրութիւնը իւր վրայ հրաւիրելով
եւ քաշուելուն պատճառը հասկըցուելով, մեծամեծ գովասանք-
ներ լսելու տեղի պիտի տար:

(Շարայաբեյի)



ՊԱՏԿԵՐ տասն է. հինգ օրը մի անգամ կը հրատարակուի.

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դանեկան.
Գաւառաց է. օտար երկիրներու համար
բղրատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Խորաքանդիչը թիւ 2 դանեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա , Նեշիլ փողոց
Թիւ 1 , ուր պետք է ղլմել բաժանորդագրութեան է. քերթին
վերաբերեալ այլ ամենան խնդրոց համար :

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدور